ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Խաչպար ՍՊԸ-ն ՎԶԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	Ամիքսան	Ամիքսան	ИНТЕРСЕН ПЛЮС	<<Ամիքսան խտանյութ, 1լ >>: Որպես ազդող նյութ պարունակում է Ն,Ն–բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին (3%), ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի և ալկիլդիմեթիլէթիլբենզիլամոնիումի քլորիդներ (25%), կոռոզիայի ընկճիչ և այլ բաղադրիչներ:Ախտահանիչ միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ տարբեր գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, այդ թվում տուբերկուլոզի և ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, Կանդիդա սնկերի, վիրուսների, նկատմամբ, օժտված է նաև լվացող հատկությամբ: Պիտանելիության ժամկետը արտադրողի փակ տարայում պահելու պայմանում 3 տարի է, աշխատանքային լուծույթինը՝ 14 օր: Ախտահանումից հետո միջոցի աշխատանքային լուծույթը մակերեսների վրայից լվանալու

				անհրաժեշտություն չկա: 1 լիտր խտանյութից ստացվում է 0,25 %-անոց 400 լիտր աշխատանքային լուծույթ, որը չի առաջացնում մետաղների ժանգոտում, չի փչացնում մշակվող մակերեսները, չի գունաթափում գործվածքները՝ 15 րոպե պահաժամով ախտահանումից հետո: Նախատեսված է բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական, այդ թվում՝ պտտվող բժշկական նշանակության իրեր, ճկուն և կոշտ էնդոսկոպներ) ախտահանման և նախամանրէազերծման մշակման համար, այդ թվում՝ համակցված մեկ գործընթացում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում , այդ թվում՝ մանկական և նեոնատոլոգիական բաժանմունքներում, վարակիչ հիվանդությունների օջախներում սենքերի, կոշտ գույքի, կահավորանքի պարագաների մակերեսների, սարքերի և սարքավորումների, սանիտարա-տեխնիկական սարքավորումների մակերեսների, սպիտակեղենի, սպասքի (այդ թվում՝ լաբորատոր), հիվանդի խնամքի պարագաների, մաքրման պարագաների, խաղալիքների, կոշկեղենի, ռետինե գորգերի, սանիտարական փոխադրամիջոցի ախտահանման և լվացման համար մանրէային ծագումնաբանությամբ վարակների ժամանակ: Ունի ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 10 հունիսի 2016թ., թիվ 1791-Ա:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՎՁԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
6				